



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ
ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

08.02.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ԱՄ-2019/03**

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձն՝
ի դեմս Մհեր Անանյանի

Մասնակցությամբ՝

«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի լիազորված ներկայացուցիչներ՝ Հ. Ենգոյանի, Ա.
Պարանյանի և Ա. Հարությունյանի (լիազորագիր տրված՝ 11.01.2019թ.)

ՀՀ պաշտպանության նախարարության լիազորված ներկայացուցիչ՝ Վ. Վահանյանի
(լիազորագիր տրված՝ 11.01.2019թ.)

Քննելով ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար բժշկական
պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված « ՀՀ ՊՆ
ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/30» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի շրջանակներում «Նաիրի-
Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից 11.01.2019թ. ներկայացված և 11.01.2019թ. վարույթ ընդունված
բողոքը (այսուհետ նաև՝ ԳԲՔԱ-ԱՄ-2019/03 բողոք) և կից փաստաթղթերը, պարզեցի
հետևյալը.

1. «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) 11.01.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊԶԲ-9/30» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ (այսուհետ նաև՝ Աճուրդ): Սույն ընթացակարգի հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանված 2019թ. հունվարի 11, ժամը 10:30-ն:

Համաձայն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագրագնման ժամանակացույցի», սահմանվել են բժշկական պարագաների այնպիսի խտրական պարամետրեր, որոնք համապատասխանում են բացառապես ««Smiths Medical Poortex»» ընկերության արտադրությանը, ում միակ պաշտոնական ներկայացուցիչն է և համապատասխանաբար ներկրողը՝ ««Կուռացիո»» ՍՊԸ-ն:

Հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքը՝ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն ս.թ. հունվարի 4-ին հարցում է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարությանը, որով մասնավորապես նշել՝

1. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժիններ 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8 և 9-ի տեխնիկական բնութագրերում նշված է գերնուրբ տեսակի տանձաձև կառուցվածքի մանժետ, մեր կողմից առաջարկվող արտադրանքը ունի ցածր ճնշման գերնուրբ գլանաձև մանժետ, որը ապահովում է ճնշման հավասարաչափ բաշխում մեծ ծավալի մակերեսի վրա իջեցնելով ճնշումը տրախտայի նուրբ հյուսվածքների վրա, ապահովելով լիարժեք հերմետիկություն: Խնդրում ենք տալ պարզաբանում մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից առաջարկված գլանաձև մանժետը չի կարող համարվել համարժեք, քանի որ գլանաձև կառուցվածքը ապահովում է ցածր ճնշում մեծ մակերեսի վրա, իսկ տանձաձևը՝ ապահովում է ցածր ճնշում հյուսվածքների հետ շփման ավելի փոքր մակերեսի վրա:

2. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժին 10-ին մեր կողմից առաջարկվող զտիչի քաշը 23 գրամից ոչ ավել է, հոսքի դիմադրությունը 2,0սմ H2O (60լ/րոպեի դեպքում), սեղմված

ծավալը 41մլ, ֆիլտրացիայի աստիճանը 99,999%, եվրոպական արտադրության: Խնդրում ենք տալ պարզաբանում մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից առաջարկված զտիչը չի կարող համարվել համարժեք, քանի որ այն ոչ միայն ավելի ծանր է (հատկապես անցանկալի է, երբ ֆիլտրը տեղադրվում էին տուբացիոն խողովակին մոտ կոնտուրի ծայրում, և ստեղծում հավելյալ ծանրություն փողի վրա, ինչն էլ իր հերթին կարող է մեծացնել փողի ծավման հավանականությունը), այլ նաև ունի զգալիորեն ավելի մեծ մեռյալ տարածության ծավալ (41 մլ պահանջված ոչ ավել 32 մլ-ի փոխարեն), որը զգալի բացասական և անցանկալի հատկանիշ է հատկապես ցածր ծավալային շնչառության պարագայում:

3. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժին 12-ին մեր կողմից առաջարկվող հավաքածուն ունի՝ տրախտեալ մանժետի տրամագիծը՝ 23մմ, Բրոնխտեալ մանժետի տրամագիծը՝ 18մմ: Կազմը՝ Ռոբերտ շոուտի պիէնդորբրոնխիալ խողովակ-1 հատ, Ստիլետ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր 2 հատ, կոննեկտոր 15mm 2 հատ, Y աձև կոննեկտոր 1 հատ, արտաձծման ծայրադիրներ 4 հատ: Խնդրում ենք տալ պարզաբանում վերը նշված հավաքածուն կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր առաջարկը չի կարող համարվել համարժեք, քանի որ առաջարկվող ապրանքատեսակի բրոնխտեալ և տրախտեալ մանժետների չափսերը էականորեն տարբերվում են պահանջվածից՝ ինչը չի կարող ապահովել երաշխավորված արդյունք:

4. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժին 13-ին մեր կողմից առաջարկվող հավաքածուն ունի՝ տրախտեալ մանժետ տրամագիծը՝ 23մմ, Բրոնխտեալ մանժետի տրամագիծը՝ 18մմ: Կազմը՝ Ռոբերտ շոուտի պիէնդորբրոնխիալ խողովակ-1 հատ, Ստիլետ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր 2 հատ, կոննեկտոր 15mm 2 հատ, Y աձև կոննեկտոր 1 հատ, արտաձծման ծայրադիրներ 4 հատ: Խնդրում ենք տալ պարզաբանում վերը նշված հավաքածուն կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր առաջարկը չի կարող համարվել համարժեք, քանի որ առաջարկվող ապրանքատեսակի տրախտեալ մանժետի չափսերը էականորեն տարբերվում է պահանջվածից՝ ինչը չի կարող ապահովել երաշխավորված արդյունք:

5. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժին 13-ին մեր կողմից առաջարկվող հավաքածուն ունի՝ տրախտեալ մանժետ տրամագիծը՝ 25 մմ, Բրոնխտեալ մանժետի

տրամագիծը՝ 18մմ: Կազմը՝ Ռոբերտ շոուտի պիէնդորբրոնխիալ խողովակ-1 հատ, Ստիլետ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր 2 հատ, կոննեկտոր 15mm 2 հատ, Y ածնկոննեկտոր 1 հատ, արտածման ծայրադիրներ 4 հատ: Խնդրում ենք տալ պարզաբանում վերը նշված հավաքածուն կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր առաջարկը չի կարող համարվել համարժեք, քանի որ առաջարկվող ապրանքատեսակի բրոնխետալ և տրախետալ մանժետների չափսերը էականորեն տարբերվում են պահանջվածից՝ ինչը չի կարող ապահովել երաշխավորված արդյունք:

6. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժին 13-ին մեր կողմից առաջարկվող հավաքածուն ունի՝ տրախետալ մանժետ տրամագիծը՝ 25մմ, Բրոնխետալ մանժետի տրամագիծը՝ 18մմ: Կազմը՝ Ռոբերտ շոուտի պիէնդորբրոնխիալ խողովակ-1հատ, Ստիլետ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր 2 հատ, կոննեկտոր 15mm 2 հատ, Y ածն կոննեկտոր 1 հատ, արտածման ծայրադիրներ 4 հատ: Խնդրում ենք տալ պարզաբանում վերը նշված հավաքածուն կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր առաջարկը չի կարող համարվել համարժեք, քանի որ առաջարկվող ապրանքատեսակի տրախետալ մանժետի չափսերը էականորեն տարբերվում է պահանջվածից՝ ինչը չի կարող ապահովել երաշխավորված արդյունք:

7. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժիններ 25 և 26-ի տեխնիկական բնութագրերում նշված է գերնուրբ տեսակի տանձաձև կառուցվածքի մանժետ, մեր կողմից առաջարկվող արտադրանքը ունի ցածր ճնշման գերնուրբ գլանաձև մանժետ, որը ապահովում է ճնշման հավասարաչափ բաշխում մեծ ծավալի մակերեսի վրա իջեցնելով ճնշումը տրախետայի նուրբ հյուսվածքների վրա, ապահովելով լիարժեք հերմետիկություն: Խնդրում ենք տալ պարզաբանում մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից առաջարկված գլանաձև մանժետը չի կարող համարվել համարժեք, քանի որ գլանաձև կառուցվածքը ապահովում է ցածր ճնշում մեծ մակերեսի վրա, իսկ տանձաձևը՝ ապահովում է ցածր ճնշում հյուսվածքների հետ շփման ավելի փոքր մակերեսի վրա:

8. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժիններ 27, 28, 29, 30, 31, 32, 33, 34, 35, 36, 42, 43, 44 և 45-ի տեխնիկական բնութագրերում նշված է գերնուրբ տեսակի տանձաձև կառուցվածքի մանժետ, մեր կողմից առաջարկվող արտադրանքը ունի ցածր ճնշման

գերնուրբ գլանաձև մանժետ, որը ապահովում է ճնշման հավասարաչափ բաշխում մեծ ծավալի մակերեսի վրա իջեցնելով ճնշումը տրախետայի նուրբ հյուսվածքների վրա, ապահովելով լիարժեք հերմետիկություն: Խնդրում ենք տալ պարզաբանում մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից առաջարկված գլանաձև մանժետը չի կարող համարվել համարժեք, քանի որ գլանաձև կառուցվածքը ապահովում է ցածր ճնշում մեծ մակերեսի վրա, իսկ տանձաձևը՝ ապահովում է ցածր ճնշում հյուսվածքների հետ շփման ավելի փոքր մակերեսի վրա:

9. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժիններ 46 և 47-ի տեխնիկական բնութագրերում նշված է գերնուրբ տեսակի տանձաձև կառուցվածքի մանժետ, մեր կողմից առաջարկվող արտադրանքը ունի ցածր ճնշման գերնուրբ գլանաձև մանժետ, որը ապահովում է ճնշման հավասարաչափ բաշխում մեծ ծավալի մակերեսի վրա իջեցնելով ճնշումը տրախետայի նուրբ հյուսվածքների վրա, ապահովելով լիարժեք հերմետիկություն: Խնդրում ենք տալ պարզաբանում մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր կողմից առաջարկված գլանաձև մանժետը չի կարող համարվել համարժեք, քանի որ գլանաձև կառուցվածքը ապահովում է ցածր ճնշում մեծ մակերեսի վրա, իսկ տանձաձևը՝ ապահովում է ցածր ճնշում հյուսվածքների հետ շփման ավելի փոքր մակերեսի վրա:

10. Հարգելի հանձնաժողով՝ չափաբաժին 50-ին մեր կողմից առաջարկվող ստիլետի չափսը 2,0 (230x2.0mm, 2.5-3.0 փողերի համար), եվրոպական արտադրության: Խնդրում ենք տալ պարզաբանում մեր առաջարկը կարող է համարվել համարժեք:

Պատասխան՝ տեղեկացնում ենք, որ Ձեր առաջարկը չի կարող համարվել ընդունելի, քանի որ չի ապահովում հրավերի տեխնիկական բնութագրում նշված փողերի հետ աշխատելու հնարավորությունը (2.5-4.5 փողերի համար):

04.01.2019թ.-ին ներկայացված հարցմանն ի պատասխան՝ պարզաբանումից պարզ դարձավ, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի մոտ առկա ցանկացած ապրանք ընդունելի չէ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ չնայած այն հանգամանքին, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքները ավելի որակյալ էին, ինչը հանդիսացավ պատճառ նշված մրցույթին չմասնակցելու համար: Ընդ որում, նույն իրավիճակն է տիրում նաև այլ ներկրող ընկերությունների մոտ, որոնք չեն հաղիսանում «Smiths Medical Poortex» ընկերության արտադրության ներկրողները:

Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

Օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.

Գտնում ենք, որ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/30>> ծածկագրով էլ. աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից հրավերը կազմելիս՝ թույլ է տրվել Օրենքի վերոշարադրված պահանջների խախտում:

Մասնավորապես, գրեթե բոլոր հարցադրումներին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրվել է կրկնվող պատասխան, այն է՝ տեղեկացնում ենք, որ Ձեր առաջարկը չի կարող համարվել համարժեք, քանի որ էականորեն տարբերվում է պահանջվածից՝ ինչը չի կարող ապահովել երաշխավորված արդյունք: Նման հիմնավորումը, մեր կարծիքով չի կարող ապացույց հանդիսանալ, որ պահանջված տեխնիկական բնութագիրը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը: Արդյունքում նման տեխնիկական բնութագրի պայմաններում Աճուրդը չի կարող իրականացվել միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ, կխախտվի պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչը կհանգեցնի գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

Այնուհանդերձ, ստեղծվում է տպավորություն, որ ՀՀ պաշտպանության նախարարությունը ներկայացրել է այնպիսի տեխնիկական բնութագիր, որը կարող է ներկայացնել միայն Smiths Medical Poortex արտադրող ընկերությունը՝ իր բացառիկ ներկայացուցչի միջոցով:

Նման փաստական հանգամանքների պայմաններում գտնում ենք, որ Հրավերի «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույց»-ը վիճարկվող չափաբաժինների մասով պետք է վերանայվեն և համապատասխանեցվեն գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է գնման առարկայի բնութագրերը, նախատրակավորման հայտարարության կամ հրավերի պահանջները, ապա բողոքը ներկայացվում է մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը:

Նույն հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» պարբերության համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

բ. Պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ամփոփելով վերոգրյալը, Ընկերությունը խնդրել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱԾԱՊՁԲ-9/30» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը:

Ընկերությունը ի լրումն բողոքի 21.01.2019թ. գրությամբ հայտնել է հատկյալը.

«Աճուրդի հրավերի Հավելված 1-ի՝ «Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի», սահմանվել են բժշկական պարագաների այնպիսի խտրական պարամետրեր, որոնք համապատասխանում են բացառապես ՀՀ Smiths Medical Poortex» ընկերության արտադրությանը, ում միակ պաշտոնական ներկայացուցիչն է և համապատասխանաբար ներկրողը ՀՀ-ում՝ «Կուտացիո» ՍՊԸ-ն:

Արդյունքում նման տեխնիկական բնութագրի պայմաններում Աճուրդը չի կարող իրականացվել միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, համաչափ, վերոհիշյալի արդյունքում կխախտվի պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը, ինչը կհանգեցնի գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը հետևյալ հիմնավորմամբ.

Տանձաձև մանժետի մասով Պատվիրատուի կողմից պահանջ նախատեսելը

Հրավերի 1-9, 25-36, 42-47 չափաբաժիններով պահանջված ապրանքների համար սահմանվել է հետևյալ պահանջը՝ մանժետը հատուկ գերնուրբ տեսակի, տանձաձև կառուցվածքի:

Բողոքի քննության ընթացքում Պատվիրատուն պնդեց, որ ներշնչային խողովակների (փողի) համար լավագույն մանժետը հանդիսանում է հենց տանձաձև կառուցվածք ունեցողը, ուստի նշված չափաբաժիններով պահանջվել է, որ մանժետը ունենա բացառապես տանձաձև կառուցվածք: Այս կապակցությամբ հայտնում ենք հետևյալը.

Նախ, պետք է փաստել, որ Հրավերով պահանջված մանժետի տանձաձև կառուցվածք ունեցող բժշկական սարքը համապատասխանում է բացառապես <<Smiths Medical Poortex>> ընկերության արտադրությանը, ում միակ պաշտոնական ներկայացուցիչն է <<ում և համապատասխանաբար ներկրողը՝ <<Կուռացիո>> ՍՊԸ-ն: Գտնում ենք, որ նման պայման պարունակող տեխնիկական բնութագիրը ուղղակիորեն հակասում է գնումների մասին << օրենսդրության պահանջներին, խախտում Օրենքի 3-րդ և 13-րդ հոդվածի կարգավորումները, ինչն իր հերթին հանգեցնում է գնման գործընթացի խտրական կազմակերպմանը, մասնակիցների շրջանակի սահմանափակմանը, մրցակցության սկզբունքի խախտմանը և այլն:

Տեղեկացնում ենք, որ մանժետի օպտիմալ կառուցվածքի հարցը (տանձաձև, գլանաձև, կոնուսաձև) կրում է տեսական վեճի բնույթ, բազմաթիվ գիտնականների կարծիքը այս հարցի շուրջ միանշանակ չէ: Մի խումբ գիտնականների կարծիքով, գերադասելի է մանժետի տանձաձև կառուցվածքը, մյուսների կարծիքով՝ գլանաձևը, իսկ երրորդ խմբի կարծիքով՝ դրանք համարժեք են և հնարավոր չէ պարզել, թե որն է ավելի լավը: Օրինակ, Աճուրդով պահանջվող ապրանք արտադրող ամենահանրաճանաչ KIMBERLY-CLARK ընկերությունը արտադրում է հենց գլանաձև կառուցվածք ունեցող

մանժեռներով խողովակներ, ընդ որում, գերադասությունը մանժետի տեսակին տրվել է համապատասխան ուսումնասիրություն իրականացնելու հիման վրա (համապատասխան ուսումնասիրությունը կցվում է): Գտնում ենք, որ նման տեսական վեճի պայմաններում հնարավոր չէ օբյեկտիվորեն հիմնավորել, որ նման գնման առարկան՝ տանձաձև կառուցվածք ունեցող մանժետը, օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

Եթե պատվիրատուն, իրոք, գտնում է, որ լավագույնը մանժետը հենց տանձաձև կառուցվածք ունեցողն է, ապա ինչու մի շարք չափաբաժիններով, որտեղ խողովակը նույնպես ունի մանժետ, չի պահանջվել բացառապես տանձաձև կառուցվածքի մանժետ (օրինակ, 12,13,14,16-19 չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար): Այստեղ բողոքը քննող անձի ուշադրությունն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ վերոհիշյալ չափաբաժիններով նախատեսված ապրանքը <<Smiths Medical Poortex>> ընկերության կողմից արտադրվում է գլանաձև մանժետի կառուցվածքով, և եթե այս չափաբաժիններով նույնպես պահանջվեր տանձաձև կառուցվածքի մանժետ, ապա <<Smiths Medical Poortex>> ընկերությանը ներկայացնող <<Կուռացիո>> ՍՊԸ-ն չէր կարողանա մատակարարել նման ապրանք: Փաստորեն ստացվում է, որ Պատվիրատուի պնդումը առ այն, որ համար ընդունելի է և պահանջված բացառապես տանձաձև կառուցվածք ունեցող մանժետը, հիմնավոր չէ, քանզի մի դեպքում պահանջվել է տանձաձև կառուցվածք ունեցող մանժետ, իսկ մյուս դեպքում՝ ոչ, ինչը ևս մի անգամ ապացուցում է, որ պատվիրատուն ընդամենը ցանակացած եղանակով ցանկանում է ստանալ բացառապես «Smiths Medical Poortex» ընկերությանը ներկայացնող «Կուռացիո» ՍՊԸ-ի կողմից ներկրվող արտադրանքը:

Գնումների հետ կապված բողոքը քննող անձին խնդրում ենք նկատի ունենալ, որ այլ պատվիրատուների (մասնավորապես, բժշկական հաստատությունների՝ Վ.Ա.Ֆանարջանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն ՓԲԸ, Սուրբ Աստվածամայր ԲԿ, Վնասվածքաբանության և օրթոպեդիայի ազգային կենտրոն, Հրազդանի ԲԿ և այլն) կողմից նման մրցույթներ կազմակերպելիս՝ երբևիցե չի նշվում մանժետի կառուցվածք՝ այն պարզ պատճառով, որ վերոհիշյալը չի կարող էական, բացառիկ նշանակություն ունենալ ապրանքի որակի կամ արդյունավետության վրա: Նման մրցույթների օրինակ է՝ ՍԱԲԿ-ԲՄԱՊՁԲ 19/2, ՀԲԿ-ԳՀԱՊՁԲ-18/0202, ՈՒԱԿ-

ԲՄԱՊՁԲ-18/48, ՎՕԳԿ-ԷԱՃԱՊԾԲ-28/12/2018 և այլն (հրավերները ներկայացվում են էլեկտրոնային էղանակով):

Հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվել է, որ մասնակցի կողմից ներկայացվի իր արտադրանքի արտադրողին տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագիր (ISO, GMP, CE Mark կամ այլ), ինչպես նաև արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և/կամ որակի հավաստագիր: Հայտնում ենք, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ն ունի հրավերով պահանջվող արտադրանքի արտադրողին տրված արտադրության անվտանգության և որակի վերահսկման միջազգային հավաստագրեր (ISO, GMP, CE Mark կամ այլ), ինչպես նաև արտադրող կազմակերպության (կամ արտադրողի պաշտոնական ներկայացուցչի) կողմից տվյալ ապրանքի համար տրված համապատասխանության և/ կամ որակի հավաստագիր, ինչը ապացուցում է, որ Ընկերության կողմից առաջարկվող արտադրանքը բարձրակարգ է, այն եվրոպական արտադրության է: Սակայն Պատվիրատուի կողմից կամայական, սուբյեկտիվ կարծիքի վրա հիմնավորված <<տանձաձև կառուցվածք ունեցող մանժետ>> պահանջելու արդյունքում դաշտից դուրս են մղվել պահանջվող արտադրանք ներկրող բոլոր ընկերությունները, որոնց մանժետները չունեն տանձաձև կառուցվածք, ինչը ներկրում է բացառապես «Կոտացիո» ՍՊԸ-ն:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ գիտական վեճի առարկա հանդիսացող պահանջը չպետք է ներառվեր ապրանքի տեխնիկական բնութագրում, եթե նման պահանջ ներկայացնելու արդյունքում նման պահանջով ապրանք կարող է մատակարարել բացառապես մեկ ընկերություն: Նման մոտեցումը անխուսափելիորեն կհանգեցնի գների թանկացման (չկա մրցակցություն, չկա նվազագույն գին), ինչ էլ իր հերթին կառաջացնի << պետական բյուջեի միջոցների ոչ արդյունավետ օգտագործում:

Հրավերի որոշ չափաբաժիններով կոնկրետ չափեր պահանջելը

Ինչպես արդեն նշվել է, Աճուրդի որոշ չափաբաժիններով չի պահանջվել բացառապես տանձաձև կառուցվածքի մանժետ (օրինակ, 10-22 չափաբաժիններով նախատեսված ապրանքների համար): Այս կապակցությամբ նշել ենք, որ վերոհիշյալ չափաբաժիններով նախատեսված ապրանքը <<Smiths Medical Poortex>> ընկերության կողմից արտադրվում է գլանաձև մանժետի կառուցվածքով, և եթե այս չափաբաժիններով

նույնպես պահանջվեր տանձաձև կառուցվածքի մանժետ, ապա <<Smiths Medical Poortex>> ընկերությանը ներկայացնող <<Կուռացիո>> ՍՊԸ-ն չէր կարողանա մատակարարել նման ապրանք:

Սակայն որպեսզի նաև այս չափաբաժիններով առավելություն տրվի <<Smiths Medical Poortex>> ընկերությանը ներկայացնող <<Կուռացիո>> ՍՊԸ-ին, Պատվիրատուն սահմանել է այնպիսի չափանիշներ (կոնկրետ չափսեր), որոնք համապատասխանում են բացառապես <<Smiths Medical Poortex>> ընկերության արտադրանքին: Ընդ որում, կոնկրետ չափեր նշելը մեր կարծիքով, չի կարող լինեն օբյեկտիվորեն հիմնավորված, այն կրում է սուբյեկտիվ բնույթ, որի արդյունքում <<Կուռացիո>> ՍՊԸ-ն ստանում է բացառիկ հնարավորություն մատակարարելու միայն իր ապրանքին համապատասխանող տեխնիկական բնութագրով արտադրանք:

Խոսքը, մասնավորապես, գնում է Աճուրդի 10-22, 41, 49, 50, 51, 52, 55, 56, 56 չափաբաժինների մասին:

Նման խտրական պահանջներ են հանդիսանում, մասնավորապես.

10-րդ չափաբաժնի մասով՝ քաշը 20գ-ից ոչ ավել, հոսքի դիմադրությունը 3.0սմ H2O (60լ/րոպեի դեպքում), մեռյալ տարածությունը ոչ ավել 32 մլ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

11-րդ չափաբաժնի մասով՝ երկարությունը 152 սմ, (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

12-րդ չափաբաժնի մասով՝ տրախետալ մանժետի տրամագիծը՝ 27մմ, բրոնխետալ մանժետի տրամագիծը՝ 21մմ, (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

13-րդ չափաբաժնի մասով՝ տրախետալ մանժետի տրամագիծը՝ 27մմ, բրոնխետալ մանժետի տրամագիծը՝ 18մմ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

14-րդ չափաբաժնի մասով՝ տրախետալ մանժետի տրամագիծը՝ 28մմ, բրոնխետալ մանժետի տրամագիծը՝ 21մմ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

15-րդ չափաբաժնի մասով՝ տրախեալ մանժետի տրամագիծը՝ 28մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 18մմ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

16-րդ չափաբաժնի մասով՝ տրախեալ մանժետի տրամագիծը՝ 29մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 21մմ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

17-րդ չափաբաժնի մասով՝ տրախեալ մանժետի տրամագիծը՝ 29մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 23մմ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

18-րդ չափաբաժնի մասով՝ տրախեալ մանժետի տրամագիծը՝ 31 մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 21 մմ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

19-րդ չափաբաժնի մասով՝ տրախեալ մանժետի տրամագիծը՝ 31 մմ, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 23մմ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

20-րդ չափաբաժնի մասով՝ տուխիմեպալրպլաստիկ ասեղ՝ 18 G80mm (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

21-րդ չափաբաժնի մասով՝ տուխիմեպալրպլաստիկ ասեղ՝ 16 G 80mm, ...ածր դիմադրությամբ ներարկիչ՝ 10մլ հետընթացի սահմանափակիչով (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

22-րդ չափաբաժնի մասով՝ երկարությունը 183սմ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

41-րդ չափաբաժնի մասով՝ գոֆրեաձև 90* (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

49-րդ չափաբաժնի մասով՝ երկարությունը 60./152սմ (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

50-րդ չափաբաժնի մասով՝ չափսը 100 (225x2.0mm) (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

51-րդ չափաբաժնի մասով՝ չափսը՝ 200 (335x4.0mm) (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

52-րդ չափաբաժնի մասով՝ չափսը՝ 300 (365x5.0mm) (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

55-րդ չափաբաժնի մասով՝ ID-10.2, OD-12.1, max.cuff-25mm (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

56-րդ չափաբաժնի մասով՝ ID-10.2, OD-12.1, max.cuff-35mm (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

57-րդ չափաբաժնի մասով՝ ID-11.5, OD-15.0, max.cuff-40 mm (նշված պահանջը իր համակացության մեջ համապատասխանում է բացառապես <<Կուռացիո>> ՍՊԸ-ի ներկրվող արտադրանքին):

Գնումների հետ կապված բողոքը քննող անձ Մ.Անանյանի ուշադրությունն ենք դարձնում այն հանգամանքի վրա, որ Աճուրդով պահանջվող բժշկական պարագաների չափսերը սահմանվում են ոչ թե համապատասխան իմպերատիվ մլգ կամ մմ պարամետրերով, այլ այլ ընդունված չափսերով՝ размер: Ուստի Պատվիրատուները, ինտուբացիոն խողովակների կամ կատետրների գնման ընթացակարգեր հայտարարված ընդամենը նշում են պահանջված ապրանքի բժշկական չափսերը (օրինակ, N 8 , 9 և այլն, համապատասխան ապացույցները կցվում են):

Ամփոփելով վերոգրյալը՝ Ընկերությունը << գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է պարտավորեցնել << պաշտպանության նախարարության կարիքների համար էլեկտրոնային աճուրդի միջոցով բժշկական պարագաների և

ծախսվող նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված <<<<ՊՆՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/30>> ծածկագրով էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովին չկայացած հայտարարել նշված աճուրդը՝ 1-9, 10-22, 25-36,41, 42-47,49, 50, 51, 52, 55, 56-րդ չափաբաժինների մասով:

2. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ պաշտպանության նախարարությունը 23.01.2019թ. գրությամբ հայտնել է հետևյալը.

«11.12.2018թ-ին հրապարակվել է ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊՁԲ-9/30 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ձեռքբերման ընթացակարգի հրավեր: Նշված ընթացակարգի շրջանակներում էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով «Նաիրի – Ալանիկա» ՍՊ ընկերության կողմից պարզաբանումներ ստանալու նպատակով գնահատող հանձնաժողովին տրվել էր թվով 17 հարցում, որոնցից 6-ին (հարցադրումների 35%) տրվել է դրական պատասխան, ուստի մեզ համար անհասկանալի է բողոքում ներառված «...գրեթե բոլոր հարցադրումներին ՀՀ պաշտպանության նախարարության կողմից տրվել է կրկնվող պատասխան, այն է՝ տեղեկացնում ենք, որ Ձեր առաջարկը չի կարող ընդունվել...»: Պատասխանները նույնատիպ են եղել, քանի որ հարցադրումները նույնպես եղել են նույնատիպ, մասնավորապես՝ հարցադրումներից 4-ը վերաբերվել են արհեստական շնչառության համար նախատեսված տանձաձև մանժետով փողերի փոխարեն գլանաձև մանժետով փողերի առաջարկի համարժեք լինելուն, հարցադրումներից 8-ը վերաբերվել են թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար նախատեսված ներշնչափողային երկլուսանցքանի տարբեր չափսերի խողովակների տրախտալ և բրոնխիալ մանժետների առաջարկվող չափսերի համարժեքությանը, հարցադրումներից 3-ը վերաբերվել են տարբեր չափսերի ինտուբացիոն ստիլետների համարժեքությանը և 1 հարց շնչական կոնտուրի համար նախատեսված գոտի բակտերիո-վիրուսային ֆիլտրի համարժեքության վերաբերյալ:

Այսպիսով կարելի է «Նաիրի - Ալանիկա» ՍՊ ընկերության կողմից ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊԶԲ-9/30 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի միջոցով ՀՀ ՊՆ կարիքների համար բժշկական պարագաների և ծախսվող նյութերի ձեռքբերման ընթացակարգի շրջանակներում առաջադրված հարցերը բաժանել հետևյալ 4 խմբերի.

Տանձաձև մանժետի վերաբերյալ - 4 հարց

Տրախետալ և բրոնխիալ մանժետների չափսերի վերաբերյալ - 8 հարց

Ինտուբացիոն ստիլետների չափսերի վերաբերյալ - 3 հարց

Զտիչ բակտերիո-վիրուսային ֆիլտրի վերաբերյալ - 1 հարց:

Հարցադրումներին սահմանված ժամկետներում գնահատող հանձնաժողովի կողմից տրվել են սպառիչ պատասխաններ՝ մասնավորապես.

Տանձաձև մանժետի փոխարեն գլանաձև մանժետով փողերը չեն համարվել համարժեք և «ներշնչափողային նազոտրախետալ փողերի» տեխնիկական բնութագրերում պարտադիր պայման է համարվել մանժետների տանձաձև կառուցվածքը, քանի որ

- միևնույն գերնուրբ նյութից՝ թափանցիկ, թերմոպլաստիկ, իմպլանտացիոն ոչ-տոքսիկ պոլիվինիլքլորիդից կազմված մանժետի գլանաձև կառուցվածքն ապահովում է ցածր ճնշում մեծ մակերեսի վրա, իսկ տանձաձևը (կոնուսաձևը)՝ ապահովում է ցածր ճնշում հյուսվածքների հետ շփման ավելի փոքր մակերեսի վրա,

- կոկորդից դեպի շնչափողի (տրախետալ) անցման անատոմիական առանձնահատկությունը հաշվի առնելով (լուսանցքի աստիճանական, կոնաձև նեղացում), փչվող մանժետի տանձաձև կառուցվածքը կրկնելով լուսանցքի ձևը՝ հյուսվածքների վրա երկարատև ինտուբացիայի ժամանակ հնարավորինս նվազագույն ներգործություն է թողնում և զերծ է պահում դրանք վնասումից,

- Շնչառության տակտի հետ մեկտեղ մանժետում փոփոխվում է ճնշումը, ինչը նպաստում է լորձաթաղանթի տեղային արյունամատակարարման լավացմանը,

- Այս տիպի մանժետները փչվելուց գործնականորեն չեն առաջացնում ծալքեր, ինչի շնորհիվ կանխվում են միկրոասպիրացիները (բերանի խոռոչի պարունակության անցումը շնչառական ուղիներ) և որպես բարդություն ասպիրացիոն թոքաբորբի առաջացումը:


Հաշվի առնելով վերոգրյալ առավելությունները և այն փաստը, որ մանժետի նման կառուցվածք ունեցող փողերը հետագա բարդությունները կանխելու նպատակով առավել նպատակահարմար է օգտագործել երկարատև ինտուբացիաների ժամանակ, ինչպես նաև ռազմաբժշկական ծառայության գործունեության առանձնահատկությունները,

մասնավորապես՝ այն հանգամանքը, որ սովորաբար նախօրոք հայտնի չէ, թե տվյալ փողը որ հոսպիտալում կտեղադրվի, հիվանդը/վիրավորը (ականապայթյունային, հրազենային և այլն) ինչքան ճանապարհ (ժամանակ/օր) կանցնի մինչև վերջնական վիրահատական միջամտության անցկացումը, ինչքան ժամանակ կսպասի հիվանդը, մինչև վիրահատության իր հերթի հասնելը՝ ռազմական գործողությունների ժամանակ, երբ հնարավոր է վիրավորների մեծաքանակ հոսք, ինչ տևողություն կունենա վիրահատությունը և հետվիրահատական շրջանում ինչքան ժամանակ (ժամ/օր) դեռևս անհրաժեշտություն կլինի թոքերի արհեստական շնչառության անցկացման համար, կարելի է արձանագրել, որ փանձածն (կոնուսածն) մանժերի պահանջը օբյեկտիվորեն հիմնավորված է և համարժեք է ռազմաբժշկական ծառայության կարիքներին:



Ա. Արտադրող **Smiths-Medical**
http://portexland.ru/?section_id=22&pid=14

Բ. Արտադրող **Covidien/Medtronic**
http://www.meditectz.ru/docs/Covidien_respiratoroe_obespechenie.pdf



1. Տրախեալ և բրոնխիալ մանժետների չափսերի վերաբերյալ առաջադրված թվով 8 հարցերից 4-ին տրվել է դրական պատասխան (առաջարկված տարբերակների չափսերը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի չափսերից տարբերությունը կազմել է մինչև 5%), իսկ մնացած 4-ը չի համարվել համարժեք, քանի որ չափսերի անհամապատասխանությունը եղել է էական (13-15%), կար մտավախություն, որ

առաջարկվող տարբերակները չէին կարող ապահովել երաշխավորված արդյունք և համարժեք չէին այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը:

2. Նշված «Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի» ապրանքատեսակների համար տանձաձև մանժետի առկայությունը պարտադիր պայման չի հանդիսացել, քանի որ թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար նախատեսված երկճյուղ խողովակների մանժետները արդեն նախատեսվում են թոքերի բրոնխների առանձին ճյուղերի մեջ փչելու և խողովակները ֆիքսելու համար, իսկ ճյուղավորված բրոնխներն ունեն գլանաձև կառուցվածք, ի տարբերություն կոկորդ-տրախետա կոնուսաձև անցման հատվածի: Բացի այդ տվյալ փողերն օգտագործվում են միայն կրծքային վիրահատական միջամտության համար, երբ անհրաժեշտ է թոքերի սելեկտիվ (ընտրողական) ինտուբացիա միթոքանի շնչառության ապահովման համար, նման վիրահատական միջամտությունը սովորաբար տևում է միջինում 3-5 ժամ, ընդ որում շնչափողի և բրոնխի մանժետները պարբերաբար փչվում և թուլացվում են՝ կախված վիրահատության փուլերից, իսկ հետագայում, եթե հետվիրահատական շրջանում թոքերի արհեստական շնչառության անցկացման անհրաժեշտություն է առաջանում, ապա կատարվում է պերեինտուբացիա այլ փողով, այսինքն՝ հեռացվում է էնդոբրոնխիալ՝ սելեկտիվ ինտուբացիայի համար նախատեսված փողը և տեղադրվում է սովորական միլուսանցքանի ինտուբացիոն փող, ուստի պարզ է դառնում, որ էնդոբրոնխիալ՝ սելեկտիվ ինտուբացիայի համար նախատեսված փողերի պարագայում տանձաձև/տրապեցաձև մանժետի առկայությունն արդիական և պահանջված չէ, այդ իսկ պատճառով էլ մեզ հայտնի արտադրողների կողմից դրանք չեն թողարկվում, ինչպես նաև մեզ համար դրանք չունեն զգալի կլինիկական նշանակություն:

2. ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊԶԲ-9/30 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի 3 չափաբաժիններով նախատեսվել էր ՀՀ ՊՆ կարիքների համար ձեռք բերել փոքր, միջին և մեծ չափսերի ինտուբացիոն ստիլետներ համապատասխանաբար՝ 2.5-ից 4.5 համարի, 5.0-ից 8.0 համարի և 8.5-ից 9.0 համարի ինտուբացիոն փողերի համար: «Նաիրի – Ալանիկա» ՍՊ ընկերության կողմից նշված չափաբաժինների վերաբերյալ էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով ներկայացվել էր թվով 3 հարցադրում իրենց կողմից առաջարկվող ապրանքատեսակների համարժեքության վերաբերյալ, որոնցից 2-ին տրվել

է դրական պատասխան: Հարցադրումներից մեկին տրվել էր բացասական պատասխան, քանի որ հրավերով պահանջված 2.5-4.5 համարի փողերի համար նախատեսված ինտուբացիոն ստիլետի փոխարեն առաջարկվել էր 2.5-3.0 համարի փողերի համար ստիլետ, և առաջարկված փոքր չափսի ինտուբացիոն ստիլետը չուներ 3.5, 4.0 և 4.5 համարի ինտուբացիոն փողերի հետ աշխատելու հնարավորություն, իսկ ընկերության կողմից առաջարկվող միջին չափսի ստիլետը նախատեսված էր արդեն 5.0-8.0 համարի ինտուբացիոն փողերի համար:

3.2տիչ բակտերիո-վիրուսային ֆիլտրի վերաբերյալ հարցադրմանը տրվել է բացասական պատասխան, քանի որ առաջարկվող տարբերակը ոչ միայն ավելի ծանր է (հատկապես անցանկալի է, երբ ֆիլտրը տեղադրվում է ինտուբացիոն խողովակին մոտ կոնտուրի ծայրում, և ստեղծում հավելյալ ծանրություն փողի վրա, ինչն էլ իր հերթին կարող է մեծացնել փողի ծալման հավանականությունը), այլ նաև ունի զգալիորեն ավելի մեծ մեռյալ տարածության ծավալ (41մլ՝ պահանջված ոչ ավել 32 մլ-ի փոխարեն /տարբերությունը կազմում է շուրջ 28%), որը զգալի բացասական և անցանկալի հատկանիշ է՝ հատկապես ցածր ծավալային շնչառության պարագայում, ինչպես նաև այն փաստը, որ հրավերով պահանջված տեխնիկական բնութագրերին համապատասխանող ֆիլտրեր արտադրվում են ոչ միայն «Smiths Medical Poortex» ընկերության կողմից այլ նաև այլ արտադրողների՝ մասնավորապես «Teleflex» ընկերության կողմից:

Ելնելով վերոգրյալից մեզ համար անհասկանալի են «Նաիրի-Ալանիկա» ՍՊ ընկերության կողմից բողոքում ներկայացված կեղծ փաստարկները, մասնավորապես՝ «...սահմանվել են բժշկական պարագաների այնպիսի խտրական պարամետրեր, որոնք համապատասխանում են բացառապես «Smiths Medical Poortex» ընկերության արտադրությանը...» և «... ներկայացված հարցմանն ի պատասխան պարզաբանումից պարզ դարձավ, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի մոտ առկա ցանկացած ապրանք ընդունելի չէ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ չնայած այն հանգամանքի, որ «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքները ավելի որակյալ էին, ...», քանի որ

- Տանձաձև (կոնուսաձև) մանժետով ինտուբացիոն խողովակներ արտադրվում են ոչ միայն «Smiths Medical Poortex» ընկերության կողմից, այլ նաև Covidien/Medtronic ընկերության կողմից, որը ՀՀ-ում ներկայացված է «Մեդիտեք» և «Մեգիել» ՍՊԸ-ներով,

- ՀՀ պաշտպանության նախարարությունը ռազմաբժշկական ծառայության կարիքների համար գնում է ոչ միայն տանձաձև (կոնուսաձև) կառուցվածքի մանժետով երկարատև ինտուբացիայի համար նախատեսված ինտուբացիոն խողովակներ, այլ նաև գլանաձև մանժետով՝ ինչի մասին «Նաիրի-Ալանիկա» ընկերությունը քաջատեղյակ է, քանզի ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԷԱՃԱՊԶԲ-9/23 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի համապատասխան չափաբաժիններով ներկայացրել է մասնակցության հայտ և տվել գնային առաջարկ,

- Գնահատող հանձնաժողովը էլեկտրոնային աճուրդի համակարգի միջոցով տրված հարցադրումներում միայն գլանաձև մանժետի առկայության վերաբերյալ տեղեկատվության հիման վրա չի կարող որոշել առաջարկվող ապրանքատեսակի ապրանքանիշն ու որակը, և բացի այդ, ապրանքատեսակների գնահատումը հանձնաժողովի կողմից իրականացվում է մրցույթի որակավորման փուլում, երբ մասնակցի կողմից ներկայացվում է առաջարկվող ապրանքատեսակի լիարժեք նկարագրությունը, ինչպես նաև տեղեկատվություն արտադրող ընկերության և ծագման երկրի մասին,

- Առաջարկվող ապրանքատեսակների հնարավոր համարժեքության վերաբերյալ ներկայացված հարցադրումների շուրջ 35%-ին գնահատող հանձնաժողովի կողմից տրվել է դրական պատասխան:

Բողոքի իրավական հիմքերի և հիմնավորումների վերաբերյալ տեղեկացնում ենք, որ պաշտպանության նախարարության ռազմաբժշկական վարչությունը գնման ենթակա ապրանքատեսակների տեխնիկական բնութագրերը կազմելիս առաջնորդվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածով, այն է՝

1. Գնման առարկայի բնութագրերը **պետք է ամբողջությամբ և հստակ նկարագրեն ձեռքբերվող ապրանքի, աշխատանքի կամ ծառայության հատկանիշները, դրանց ձեռքբերման և վճարման պայմանները՝ բացառելով տարակերպ մեկնաբանությունը:** Գնման առարկայի բնութագրերը, որոնք ներառում են նաև պայմանագրի գինը, ընդգրկվում են պայմանագրում:

2. Գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն **հնարավոր** մասնակիցների համար.

/սակայն ոչ ցանկություն ունեցող, բայց Պարլիրարուի կարիքի բավարարման համար ոչ պիտանի ապրանք առաջարկող բոլոր մասնակիցների համար: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 N 526-Ն որոշման 22 կետի համաձայն «Գնման առարկայի բնութագրերը և մասնակիցների որակավորման հատկանիշների գնահատմանը ներկայացվող չափանիշները սահմանելիս պետք է հաշվի առնել, որ դրանց պետք է բավարարեն մեկից ավելի հնարավոր մասնակիցներ:» Այսինքն եթե առկա են առնվազն երկու հնարավոր մասնակիցներ և ոչ թե արտադրողներ/

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար **չհիմնավորված** խոչընդոտների առաջացմանը.

3) պետք է լինեն **օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք լինեն այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է տվյալ գնումը.**

/սա հիմնավորվում է տեխնիկական բնութագրերը ներկայացնող պատասխանատու ստորաբաժանման, իսկ անհրաժեշտության դեպքում նաև գլխավոր մասնագետների կողմից՝ հիմք ընդունելով կոնկրետ կարիքը բավարարելուն ուղղված տվյալ ապրանքի որակն ապահովող օբյեկտիվորեն անհրաժեշտ բնութագրերի առկայությունը՝ ըստ միջազգային նորմատիվ փաստաթղթերի/

4) **ներառում են գնման առարկայի** մասնագրի, տեխնիկական տվյալների, իսկ աշխատանքների դեպքում՝ նաև աշխատանքների ծավալաթերթի, ժամանակացույցի և այլ ոչ գնային պայմանների **ամբողջական և համարժեք նկարագրությունը:**

